

**14.04.23 - 14.04.23**

14:30

### **Անցանց**

Գրանցումը բաց է



[Պահպանել Google օրացույցում](#)

ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանի 501 ընթերցասրահ

**Ս.թ. ապրիլի 14-ին՝ ժամը 14:30-ին, ԵՊՀ Սարգիս և Մարի Իզմիրյանների անվան գրադարանի 501 ընթերցասրահում** տեղի կունենա «Կորպորատիվ վաճառքը՝ որպես արևային բիզնեսի շարժիչ ուժ: Աշխատանքի հնարավորություն ԵՊՀ ուսանողների համար» խորագրով տեղեկատվական հանդիպում «Արփի Սոլար» ընկերության ներկայացուցիչների հետ:

Հանդիպման ընթացքում կխոսվի ընկերության մասին, ինչպես նաև կներկայացվեն ընկերությունում ԵՊՀ ուսանողների և շրջանավարտների կարիերայի ստեղծման հնարավորությունների մասին: Բանախոսներն են Կորպորատիվ վաճառքի պատասխանատուներ Սամվել Մարտիրոսյանը, Արման Խաչատրյանը, հատուկ նախագծերի պատասխանատու Արսեն Հարությունյանը:

Հանդիպման ընթացքում կքննարկվեն հետևյալ թեմաները՝

- 1.«Արևային համակարգերի դերն ու նշանակությունը»,
- 2.«Արևային բիզնեսի հնարավորություններն ու առանձնահատկությունները»,
- 3.«Արևային նախագծերի կառավարում, բիզնես բանակցություններ»,
- 4.«Արևային համակարգերի կորպորատիվ վաճառքի մոտեցումները և տեխնիկաները. հարցուպատասխան»,
- 5.«Մասնագիտական պրակտիկայի և աշխատանքի հնարավորություն ընկերությունում»:

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1

(+37460) 710000

info@ysu.am